



ՄԵՎԱՆԻ անուշալը. Շորկութե և առյուղան

Կ. Ք. ԱՅՐՄԻՇԵՎ.

Խետեսագիտական գիտությունների բեկածու

Լիճ, որն առաջացել է ոչ վաղ անցյալում

Հայաստանի բարձրաբերձ լեռների գրկում տարածվել է հրաշագեղ Սևանը՝ հայ ժողովրդի քաղմաղարյան պատմության բոլոր իրադարձությունների մշտական վկան:

Իսկ ե՞րբ է առաջացել այն:

Գիտնականներից շատերի կարծիքով այդ լիճը նախապատմական անցյալում գոյություն չի ունեցել: Ամենայն հավանականությամբ լիճ այժմյան հատակով անցել է Հրազդան գետի և նրա վտակների հնագարյան հունը, որ սկիզբ է առել Բասարգեշարի շրջանում՝ Վարդենիսի լեռնաշղթայի լանջերից:

Հետազոտում, երկիր ներքին ուժերի գործունեության հետևանքով Հրազդանի գետաբերանի շրջանում ռելեֆը բարձրացել է, գոյացել են ծալքեր, որոնք փակել են գետի ճանապարհը դեպի Արարատյան դաշտավայրը, և ջրերը կու-

տակվելով գոգահովտում, առաջացրել են մի վիրիարի ջրամբար, որն անցյալներում կոչվել է Գեղամա ծով:

Գիտական այս ենթադրությունը հաստատում են հնագետները, որոնք լիի մերկացած ափերին, Շործա գյուղի մոտակայքում հայտնաբերել են մ.թ.ա. XIV դարին պատկանող բնակավայրի ավերակներ. այստեղ ապրելիս է եղել իր ժամանակի համար բարձր կուտուրա ունեցող մի հասարակություն:

Մարտունու շրջանի Բելաղրան գյուղի մուտքում մինչև մեր օրերն էլ պահպանվել են Ռուսա բազավորի ժամանակներում ժայռի վրա փորագրված սեպագրեր, որոնք վկայում են մինչև Սևան լիճը ուրարտացիների կատարած նվաճողական արշավանքների մասին:

Այս փաստերը խոսում են այն մասին, որ մարդն «ականատես» է եղել Սևանա լիի առաջացմանը: Դիարկե, մարդկային կյանքի տևողությունը չափական կարծ է այդ պրոցեսն ընկալելու, այն սկզբից մինչև վերջ տեսնելու համար: Դա տեղի է ունեցել հարյուրամյակների ընթացքում, և սերունդների համար գրեթե աննկատ կերպով: Բայց անվիճելի է այն, որ Սևան՝ ավելի երիտասարդ է, քան մարդը:

Ծողովրդի դարավոր երականքը

Դարեր ի վեր Հայաստանի կարևորագույն կենտրոնն Արարատյան դաշտավայրն է եղել: Մարդկանց բախտն այստեղ որոշել է ջուրը, որի պակասը միշտ զգացվել է: Այստեղ կառուցված ոսոգման ջրանցքները «պահպանում էին» փիշապները, որոնց կերտում էր ժողովորդը՝ պոչի վրա կանգնած ծկների տեսքով: Այդ վիթխարի արձանները, երախները բացած «սպասում էին» կիվիչ արեգակին, որը կյանք էր շնորհում, բայց կարող էր նաև խել այն, երաշտի ու քաղցի մատնելով մարդկանց:

Ծողովորդը մեծ տեղ է հատկացրել ջրին նաև իր էպոսը: Այստեղ ջրի հետ է կապված Ծովինարի հոլիացումը, Սասունցի Դավթի պորությունը, Մսրա Մելիքի կորքի թիվը:

Արարատյան դաշտավայրը ականատեսն է եղել բազմաթիվ նվազողների արշավանքներին ու ենթարկվել նրանց ավերումներին: Ծողովորդը միշտ վերականգնել է իր տնտեսությունը, պահպանել իր կուտուրան, բայց ջրի պրոբլեմը չի կարողացել լուծել: Նրա ողջ հույսերն առաջվա նման ուղղված են եղել դեպի Սևանի ջրերը, որոնց օգտագործումն այն ժամանակ հնարավոր չէր:

Մի թիւ պատմություն կամ՝ առաջին փորձերը

Բաղցրահամ ջրի այդ վիթխարի ավագանի օգտագործման պրոբլեմով սկսեցին զբաղվել միայն XIX դարում: Այսպես, 1847 թվականին առաջարկվում է ի հաշիվ Սևանի ջրի մեծացնել Հրապրան գետի բնական հոսքը՝ հասցնելով այն տարեկան 50 մլն մ³-ի, իսկ 1890 թվականին ինժեներ Ժիլինսկին հնարավոր է համարում նույն եղանակով ոռոգել 16 հազար հա տարածություն: Այս մասշտաբները, սակայն չեին կարող լուծել Արարատյան դաշտավայրի հողերը ոռոգելու պրոբլեմը:

XX դարի սկզբներին ավելի լայն պլաններ են առաջարկում աշխարհագրագետ Ե. Ս. Մար-

կովը, ինժեներ Ս. Վ. Զավալիշինը, կիմայագետ Ի. Վ. Ֆիգուրովսկին, մեխորատոր Ս. Ե. Մանասերյանը և ուրիշներ: Վերջինս 1910 թվականին հրապարակում է «Գոլորշիացող միլիոնները և ոռուսական կապիտալի իներտությունը» վեր նագրով մի հոդված, որտեղ առաջարկում է Սևանի ջրերն օգտագործել ոչ միայն ոռոգման, այլև էլեկտրաէներգիա ստանալու նպատակով: Նույն տարիներին անգիտացի ձեռնարկատեր Սոյուարտը և պրոֆեսոր Գոյեն առաջ են բաշում մի պլան, ըստ որի Սևանի ջրերը պետք է ուղղվեն դեպի Բուռ գետը: 1912 թվականին Սոյուարտը կոնցեսիոն պայմանագիր է կնքում կառավարության հետ, որի համաձայն Սևանի ջրի մակարդակը պետք է իջեցվեր 2 մետրով և կառուցվեր 120 հազ. կվա կարողության հիդրոէլեկտրակայան՝ Թիֆլիսի, Կիրովաբադ և Բաքու քաղաքներն էլեկտրաէներգիայով ապահովելու համար: Կառավարությունն առաջարկում է ջրողոյի ուղղության վերջնական ընտրության հարցը հետաձգել մինչևն տեխնիկական նախագծի ներկայացնելը: Սակայն առաջին համաշխարհային պատերազմը խանգարում է այդ առաջարկության կենսագործմանը:

1919 թվականին հանդես է գալիս Ս. Վ. Զավալիշին, Վելմարկի և Ի. Վ. Ֆիգուրովսկու նոր նախագիծը, որի կենսագործությունը Հրապրան գետում կապահովվեր տարեկան 500—600 մլն մ³ ջրի հոսքը: Դա բավական էր Արարատյան դաշտավայրում 107 հազ. հա հող ոռոգելու և 157 հազ. կվա ընդհանուր կարողությամբ 5 հիդրոէլեկտրակայան աշխատեյնելու համար: Ըստ այդ նախագծի Սևանի ջրի մակարդակը 200 տարվա ընթացքում իջնելու էր 41 մետրով:

Ավելի ուշ եղել են նաև սկզբունքորեն այլ նախագծեր: Օրինակ, պրոֆեսոր Մ. Ա. Մոստակովը 1932 թվականին առաջարկում է ուրիշ ջրավազանների գետերի հոսանքը բաց ջրանցք ներով ուղղել դեպի Սևանա լիճը, մի բանի մետրով բարձրացնել լին բնական մակարդակը և ջրի այդ կարգավորվող պաշարի հաշվին կատարել ոռոգում ու ստանալ էլեկտրաէներգիա:

Եվ այսպես, հետապոսողները չեին կարողանում վերջնականացնել լուծել այն հարցը, թե դեպի ո՞ւր ուղղել և ինչպես օգտագործել Սևանի ջրերը:

հաշվով 50 տարուց հետո մնալու էր միայն Փոքր Սևանը՝ 250 կմ² տարածությամբ և 7 միլիարդ մ³ ջրապաշարով:

Այսպիսով, փոխվում էր ռազի բալանսը, ըստ որի նախատեսվում էր մի կողմից Ֆիլտրացումը վերացնելու, մյուս կողմից գոլորշիացումը նվազեցնելու հաշվին ընդհիշտ մեծացնել ջրի հոսքը Հրազդանի հունով՝ տարեկան 50 մլն մ³-ից հասցնելով մինչև 700 մլն մ³-ի, որից 90 մ օգտագործելու էր Սևանի մերկացած հատակը (118 հազ. հա) ուղղելու նպատակով, 60 մլն մ³-ը թողնում էին իբրև ուղղերվ կորուստների համար, իսկ 500 մլն մ³-ը ուղղվում էր Արարատյան դաշտավայր:

Այս ցուցանիշները հետագայում ենթարկվում են ճշտման, բայց հիմնական սխեման չի փոխվում:

Սխեման ուշագրավ էր ուղղման ու էլեկտրիֆիկացման արորելմի լուծման պարզությամբ և ջրահոսքի իդեալական կարգավորմամբ: Այս թույլ էր տախին ընդհանուր առմամբ յուրացնել 238 հազ. հեկտար նոր հողեր (ենթադրվում էր մշակել Սևանի մերկացվող հատակը) և արտադրել մեծ քանակությամբ էլեկտրաէներգիա: Այս սխեման մեծ առավելություններ ունի ջրի հոսքը դեպի Բուր գետն ուղղելու տարրերակի համեմատությամբ:

Սևանը խոշոր դեր խաղաց Հայաստանի արտադրության ուժերի վարզացման ասպարեզում. մինչև այժմ ամբողջ ժողովրդական տնտեսությունը հենցում է Սևան—Հրազդան կամացի հիդրոէլեկտրակայանների հերգետիկական բազայի վրա: Բնակչության մեկ շuzին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրության քանակով Հայաստանը տարիներ շարունակ գրավել է առաջին տեղը միութենական ուսուուրիկանների մեջ և առաջ է անցել մի շարք վարզացած կապիտալիստական երկրներից: Ուսապուրիկայի տնտեսության աննախընթաց վարզացումը. էներգետիկայի այլ սեսուրների հայտնաբերումը թույլ տվեցին հապես զբաղվելու Սևանա լճի մակարդակը բարձր պահելու պրոբելմով:

Գործնական քայլեր

Մինչդեռ ժողովրդական տնտեսությունը ուղղման ու էլեկտրաէներգիայի ավելի խիստ կարիք էր պահում:

Հայաստանում տվյալական կարգերի հաստատման առաջին խև օրերից Սևանի պրոբլեմը մտնում է ԳՕԷԼՌՈՒ-ի պլանի մեջ: Ըստ այդ պլանի նախատեսվում է նրա ջրերն օգտագործել Բուր գետի ավագանում՝ կառուցելով 120 հազ. կվառ կարողությամբ հիդրոէլեկտրակայան, որը պետք է էլեկտրաէներգիայով ապահովեր Զագլիկի ալունիտների բազայի վրա հիմնված ալյումինի արտադրությունը կիրավաբարում:

1926—1927 թթ. սկսվում է Սևանի կողմաներային ուսումնասիրությունը երկրի ականավոր գիտնականների կողմից, ակադեմիկոս Ֆ. Յու. Վիհնուն-Լեսինզի ղեկավարությամբ: Վերջապես ընդունվում է մի նախագիծ, որի հիմքում ընկած էր Ս. Ե. Մանասերյանի սխեման: Նախագծի կենսագործմանը ծեռնամուխ են լինում 1933 թվականին:

Ո՞րն է այդ սխեմայի հությունը:

Սևանա լիճը գտնվում է ծովի մակերևույթից 1900 մ բարձրության վրա: Նախկինում, այսինքն մինչև ջրբողջ, նրա բռնած մակերեսը 1416 մ² էր, ջրի պաշարը՝ 58,5 միլիարդ մ³, իսկ ամենախոր կետը՝ 100 մ:

Այդ սխեմայով նախատեսվում էր 50 տարվա ընթացքում լից դեպի Հրազդան գետի հունը բաց թույնել տարեկան 1,2 միլիարդ մ³ ջուր, որով պետք է ոռոգեն Արարատյան դաշտավայրի 120 հազ. հա տարածության հողեր և, օգտագործելով ջրի ճնշումը, գետի ամբողջ երկարությամբ ստեղծել 600 հազ. կվառ ընդհանուր կարողությամբ հիդրոէլեկտրակայանների կառագադ, որը պետք է արտադրեր տարեկան 2,4 միլիարդ կիլովտ ժամ էլեկտրաէներգիա: Այս

Նոր խնդիրներ, նոր պլաններ

Սևանի դարավոր պաշարների օգտագործումն սկսելուց հետո անցած տասնամյակների ընթացքում շատ բան է փոխվել: Անսպուրլիկայի ժողովրդավան տնտեսության զարգացումը գերազանցեց ամենահամարձակ նախագուշակումներն անգամ, ուստի Սևանա լին հնարավորություններն ապագայի համար կորցնում են իրենց առաջնակարգ նշանակությունը: Արդեն 1965 թ. Հայաստանը կարիք կունենա անհամեմատ ավելի շատ էլեկտրաէներգիայի, բան տալիս են Սևան—Հրազդան կասկադի բոլոր հիդրոէլեկտրակայանները միասին, իսկ 70-ական թվականներին այդ կայանների հետպինետ կրճատվող արտադրանքը չի ծածկի ռեսառուբիկայի հեռանկարային պահանջի չնշին մասն անգամ: Այդ կասկադը հետագայում ավելի շուտ վրարային ռեզիրվ կիսանդիմանա: Եներգիայի հիմնական մատակարարողները կլինեն ջերմաէլեկտրակայանները, որոնք կաշխատեն Կովկասի, գուցե նաև ժուրըմենտանի գազով: Ինչ վերաբերում է հողերի ոռոգմանը, ապա պարզվել է, որ Արարատյան դաշտավայրը հարուստ է ստորերկրյա ջրերով և դրանց օգտագործումով, ինչպես նաև ոռոգման ցանցի կատարելագործումով կերպատի Սևանի ջրերի բոլըք:

Կարևոր այն է, որ ինչպես ցույց է տվել պրակտիկան, Սևանի ջրի մակարդակի հետագա իշեցումն իրեն լիովին չի արդարացնում. տնտեսապես ավելի շահագետ է ջրի մակարդակը լրում պահպանել ննարավորին չափ ներկա մակարդակին մոտ բարձրության վրա: Որովհետև ինչքան պակասում է ջուրը. այնքան ավելի մեծ ծախսումներ են պահանջվում մերկացած մասի հիդրոտեխնիկական և բիմիական հողաբարելավման համար. պարզվում է, որ այդ նոր հողերի ոռոգումն ավելի շատ ջուր կպահանջի, բան նախատեսվում էր, իսկ դա կնվազեցնի Արարատյան հարթավայրի ավելի արժեքավոր հողերի ոռոգման ննարավորությունը և կերպատի կասկադի հիդրոէլեկտրակայանների

արտադրանքը ու կրածրացնի ստացվող էներգիայի խննարժեքը: Բացի այս, լին հատակի ոնկեֆն այնպիսին է, որ դեպի Սևան հոսող 28 գետերի ջրերը լին ցամաքելու դեպքում կարող են ճահիճներ առաջացնել իրենց ակտիվ գոլորշիացումով: Խոկ դրանց հոսանքը մինչև Հրազդան գետի հունը հասցնելու համար անհրաժեշտ է կառուցել խոշոր ջրահավաք կանալ՝ շահագործման բարդ պայմաններով: Այս բոլորն ստիպեցին որոնել Սևանի պրոբլեմի մի նոր, ավելի առաջադիմ լուծում:

Սևանը կպահպանվի

Եվ այսպես, կյանքը ցուց տվեց, որ լին մակարդակի հետագա իշեցումը ձեռնոտ չէ ոչ մի տեսակետից: Սակայն Սևանի պահպանման գաղափարը, որ չափազանց մեծ համակրանք եր վայելում լայն հասարակության շրջաններում, միանգամից պաշտպանություն չգտավ որոշ մասնագետների և գիտնականների կողմից: Մի քանի տարի շարունակ ուսումնաժրվում էր լին մակարդակի պահպանման և ջրբողման պրոբլեմը:

Եվ, գերջապես, 1958 թ. մայիսի 30-ին ՍՍՌՄ Մինիստրների ստեղծը որոշում ընդունեց պահպանել Սևանը:

Սկսած 1965 թ. լին դարավոր պաշարներից ջրողոքը պետք է կրճատվի և հասցվի 500 միլիոն մ³-ի, այդ թվում ոռոգման շրջանում 380 միլիոն մ³-ի: Այս դեպքում Արարատյան դաշտավայրի հողերի ոռոգումը լիովին կապահովվի, իսկ Սևան—Հրազդան կասկադի հիդրոէլեկտրակայանների արտադրանքի պակասը կրացվի Աղբեջանից ստացվող գազի բազայի վրա կառուցվող ջերմաէլեկտրակայանների միջոցով:

Սակայն խնդիրը չի լուծվում միայն ջրողոքի կրճատումով: Անհրաժեշտ է լին մակարդակը մոտեցնել բնականին: Բայց ինչպե՞ս:

Նոր լուծումներ որոնելու պրոցեսում հետագուողները եկան այն եկրակացության, որ Սևանի ավազանին սահմանակից մի շարք գետերի ուղղահատվածքներում նոր հիդրոկայաններ կառուցելն ավելի քիչ էքսէկտ կարող է տալ, բան այդ գետերի ջրերի կոմպեքսային օգտագործումը Սևան—Հրազդան կասկադի հիդրոկայաններն աշխատեցնելու և Արարատյան դաշտավայ-